ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի
Հանրապետության Արմավիրի
մարզի Մեծամոր համայնք ՀՀ, Արմավիրի
մարզ, գ. Մեծամոր, Հեռ. (0231)60323 ,
metsamorg.armavir@mta.gov.am

N 82
01 օգոստոս 2019թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանը ներկայացնում է հուլիս ամսին համայնքի ղեկավարի կողմից ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Առդիր՝ 6 թերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴՎԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մեծամոր, (0231)60323, metsamorg.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 24

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի N 183- Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ավագանու 2018թվականի նոյեմբերի 12-ի N 58-ն որոշումը և Հայկ Առաքելյանի ներկայացրած հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայկ Առաքելյանին տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2.Սահմանված կարգով իրականացնել նախատեսված տեղական տուրքի վճարումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴՎԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆ

20 19թ. 07 03
գ.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մեծամոր, (0231)60323, metsamorg.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 25

ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման հաստատված կարգի 8-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 1 որոշումը և Սոֆիկ Մկրտչյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Մեծամոր համայնքի բնակիչ Սոֆիկ Մարտոյի Մկրտչյանին պատկանող ծածկագիր՝ 04-064-0011-0012-001 շինությանը տրամադրել հասցե՝ Մեծամորի խճուղի փողոց N 10/1:

2.Սույն որոշման մեկ օրինակը պետական գրանցման համար ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանմանը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴՎԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆ**

20 19թ. 07 08
գ.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մեծամոր, (0231)60323, metsamorg.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի Ն 26-Ա

ԱՏԵՍՏԱՑԻԱ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006թվականի սեպտեմբերի 11-ի <<Համայնքային ծառայողի ատեստավորման կարգը սահմանելու մասին>> Ն 15-Ն հրամանով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.2019թվականի օգոստոսի 9-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմում անցկացնել համայնքային ծառայողների ատեստացիա՝ համաձայն հավելվածի:

2.Համայնքապետարանի աշխատակազմի ատեստավորման նախապատրաստական աշխատանքներն իրականացնել <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

3.Ատեստավորման հանձնաժողովի աշխատանքների տեխնիկական սպասարկումն իրականացնելու նպատակով լիազորված անձ նշանակել համայնքի ղեկավարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանին:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴՎԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆ

20 19 թ. 07 09
գ.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մեծամոր, (0231)60323, metsamorg.armavir@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

08 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 18-Ա

ԷԴՎԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշմամբ

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավար Էդվարդ Միրզոյանին 2019թվականի հուլիսի 11-ից տրամադրել ամենամյա արձակուրդից 12 աշխատանքայինօր տևողությամբ:

2.Աշխատանքի մեջ համարել 2019թվականի հուլիսի 29-ից:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴՎԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆ

20 19 թ. 07 8
գ.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մեծամոր, (0231)60323, metsamorg.armavir@mta.gov.am

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

10 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 19

ԱՆԱՀԻՏ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին կետով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.2019թվականի հուլիսի 10-ին ք. Արմավիր՝ Արմավիրի մարզպետարան գործուղել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Անահիտ Գրիգորյանին:

2.Աշխատակազմի գլխավոր մասնագետին /Շ. Հակոբյան /սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴՎԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆ**

20 19 թ. 07 10
գ.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Մեծամոր, (0231)60323, metsamorg.armavir@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

19 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 20

ԱՆԱՀԻՏ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին կետով

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.2019թվականի հուլիսի 19-ին ք. Արմավիր՝ Արմավիրի մարզպետռարան գործուղել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Անահիտ Գրիգորյանին:

2.Աշխատակազմի գլխավոր մասնագետին՝ /Շ.Հակոբյան/ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/պ՝ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

20 19 թ. 07 19

գ.Մեծամոր